

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. Ի ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ

Ս. ԷԶՄԻՍԵՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ

Աստուծորդու Յարութեան լոյսը այսօր մի անգամ եւս հառազայքում է մեր հոգիների վերեւ, իր հետ բերելով բալասանը խնդութեան, մխիթարութեան եւ յաւերժական կեանքի յոյսի:

Սուրբ Զատիկի տօնախմբումը մեզ շնորհում է սխալների պահը խորհրդածելու մեր կեանքի իմաստի մասին, մեր հակասագրի մասին, մեր հոգու փրկութեան մասին, խորհրդածութիւն՝ որ մղում է մեզ մեր հոգու հայեացքը ուղղել դէպի քրիստոնէական համարտօքիւնը՝ մեղքի կապանքներից ազատելու եւ արժանի դառնալու անանց մի կեանքի, յարուցեալ Քրիստոսի հետ:

Այսօր մտաբերում ենք մարգարէութիւնը մեծն Նսայու, քէ՝ «Յարիցեն մեռեալ եւ կանգնեցին որ իցեն ի գերեզմանն եւ ուրախ եղիցին յերկրի» (Նսայի, ԻԶ. 19):

Այսօր մտաբերում ենք մանաւանդ Յիսուսի խօսքերը, քէ՝ «Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի զայ ժամանակ եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալ լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ եւ որք լսիցենն կեցցեն» (Յովն. Ե. 25):

Իսկ Ոսկեբերան հայրապետը Յովհաննէս պատգամում է բոլորիս՝ «Ոչ ոք թող չյուսահատուի եւ ոչ ոք չվհասուի իր մեղքերի համար, որովհետեւ մեղաց թողութիւնը ծագեց գերեզմանից. ոչ ոք չվախենայ մահից, զի Փրկչի մահը մեզ ազատեց մահից»:

Իբրեւ, Տիրոջ յարութեան անէսիսը քափանցում է մեր էութեան մէջ որպէս խորհրդաւոր մի յուզում փրկութեան յոյսի. եւ աւելին՝ որպէս մի բաժնի սարսուռ քէ մահ մեր լուսաբնակ հախնիք նոյն յոյսով են ապրել ինչպէս մենք այսօր, եւ դարեւ ու դարեւ նոյն հաւատով են դիմաւորել Յարութեան առաւօտը, Սուրբ Հոգով պարուրուած: Զոհաբերումը եւ Յարութիւնը Յիսուսի, մեր նախնեաց համար դարեւ շարունակ հանդիսացել են գերագոյն սուղութիւնը այն մեծ համարտօքեան, որ միայն զոհաբերութեամբ, սկնութեամբ կարելի է հասնել մեծ իրազորումների, տառապանքով՝ անանց ուրախութիւնների, մահուան հանապարհով՝ յաւերժական կեանքի:

Սիրելի հաւատացեալներ, այսպէս անա տօնախմբում ենք մենք եւս այսօր Սուրբ Զատիկը, վերածնունդ բնութեան զարնանային այս լուսաբացին:

Այս տարի եւս քաջեցինք քառասնորեայ պահոց ապաւախարութեան, Արեւազալի եւ Կիրակնորեայ եկեղեցական հոգեպարար արարողութեանց հաւապարհով: Հոգեւին ուղեկցեցինք Յիսուսի դէպի Դողգոթա, փորձելով կրել մեր ուսերի վրայ տանջող ծանրութիւնը խաչի՝ զոյգումով, պահեցողութեամբ, աղօթքներով եւ բարի գործերով: Ապա ծանր լուրսեամբ ապրեցինք Յիսուսի տառապանքն ու մահը խաչափայտի վրայ: Իսկ այսօր, ով հրաւիր, ցնծութեամբ դիմաւորում ենք մեծ անէսիսը Նրա ամենայաղթ Յարութեան:

Մեր մարդկային սահմանափակ մտածողութեամբ դժուար է քափանցել նեղու հորիզոնը Քրիստոսի մահուան ու Յարութեան ժեզերակոն խորհրդի, սակայն սուրբ առաքելներն ու երանելի հայրերը մեր, իրենց հոգու վկայութիւններով լուսաւորում են մեր գիտակցութիւնը՝ ըմբռնելու եւ ապրելու այդ խորհրդի հոգեւոր նշանակութիւնը: Յիշենք վկայութիւնը ներանոսաց առաքել Պողոսի՝ «Ինչպէս մի մարդով եկաւ մահը, այնպէս էլ մի ուրիշ մարդով՝ մեռելների յարութիւնը: Ինչպէս Ադամով բոլոր մարդիկ մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով բոլորը ապրելու են» (Ա. Կորնթ., ԺԵ. 21-22):

Մենք հաւատում ենք, որ Յարութեան լոյսը ուժգին հառազայրել է մեր լուսաբնակ նախնեաց հոգիներում ու նրանց ոգեւոյնչել մահուամբ մահը յաղթելու տեսիլը, ի փրկութիւն նրանց՝ մեղքերի կապանքներից եւ ի ժառանգութիւն յաիտեանական կեանքի:

Մահուամբ մահը յաղթելու տեսիլը մղել է նրանց մահառելու, պայքարելու եւ նահապետելու իսկ, վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց, վասն իրենց կեանքի ազատութեան ու խաղաղութեան:

Այդ տեսիլը, լոյսը հառազայրում է այսօր էլ մեր բոլորիս վրայ, մեր ազգի բոլոր զաւակների վրայ: Այդպէս է որ մենք՝ այսօրուաններս, ոգեպէս միանում ենք, նոյնանում մեր նախնիների իտէալների հետ, միեւնոյն Աստուծոյ օրհնութեան եւ շնորհների ներքեւ:

Այս լոյսով պարուրուած, այս յոյսերով ոգեւոյնչուած մեր ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, տնում է, զոհաբերում է, մահառում է յանուն իր ինքնութեան անաղարտ պահպանութեան, յանուն ստեղծարար գործերի իրականացման, յանուն հոգեւոր ու ազգային իտէալների կենսագործման, երկու միլիոն մեր նահապետների յիշատակի անմոռաց պահպանման, որոնք 1915-1916 դաժան տարիներին իրենց աչքերը փակեցին անաւոր տառապանքների մէջ, իրենց երազանքների իրականացումը բողբոջով յաջորդ սերունդներին որպէս սրբազան կտակ:

Այսօր, երբ տօնախմբում ենք սուրբ հրաւիր մեծ Յարութեան, այսօր, 70 տարի յետոյ ցեղասպանութեան դժոխային օրերից, չենք կարող չապրել տօնական ուրախութիւնը մեր ազգային հայրենական վերածննդի, տօնախմբումը մեր նոր կեանքի եւ ստեղծարար վիթխարի իրագործումների մեր հայրենաբնակ ժողովրդի, եղբայրական ազգութիւնների մեծ ընտանիքում, աննախընթաց անվստահութեան եւ խաղաղութեան պայմաններում:

Հայ եկեղեցու ամէն մի զաւակ, ամէն մի հայ սիրտ, ուր որ բնակուելիս լինի, Զատիկան այս արեւոտ օրերին, ի տես հայրենի վերաշինութեան ու ծաղկման, զգում է վերածննդի ուրախութիւնը, զգում է նոր կեանքի երգը, զգում է եւ հաւատում հայոց է՛լ աւելի պայծառ ապագային:

Ինչպէս գերեզմանը մեր Փրկչի Յիսուսի, այնպէս էլ գերեզմանը հայոց ազգի դատարկ է այլեւս: Եթէ Տէր Զօրի անապատներում ուխտի գնանք այսօր, կարող ենք լսել լուռ ձայնը բարի հրեւտակի՝ «Ինչո՞ւ է՛ք փնտրում կենդանիներին մեռելների մէջ, նրանք այստեղ չեն, նրանք յարութիւն են առել ու յաւէտ պիտի ապրեն»: